

Դիմում-բողոքներ

առ հուլիս 2010թ.

h/h	Դիմողի, տվյալները, գրանցման համարը	Գրության (դիմում-բողոքի) համառոտ բովանդակությունը	Տեսչության ահազանգը
1	Ա. Սիմոնյան /14.12.09թ. N43/ հսկողությունից հանված է՝ 12.01.10թ.	ք.Երևան, Ռաֆֆու, 55 հասցեում գտնվող «Իմէքս Գրուպ» ՍՊԸ-ի «Իդեալ» խանութից գնված «Սերկուրի» ջեռուցման համակարգի որակի վերաբերյալ (տեղադրելուց անմիջապես հետո շարքից դուրս է եկել)	Ընկերության կողմից դիմումատուին շահավետ պայմաններով առաջարկվել է գնել նոր գազի կաթսա, որը և տեղադրվել է:
2	Սեդա Մնացականյան ՀՀ Կառավարության աշխատակազմ 29.12.09թ N 150/20319 /12.01.10թ. N01/ հսկողությունից հանված է՝ 15.01.10թ.	ք.Երևան, Վարդանանց փ., 22 հասցեում գտնվող «Դադին» ՍՊԸ-ից գնված 9500 դրամ արժեքով էլեկտրասալիկի որակի վերաբերյալ (գնելուց երկու ամիս հետո շարքից դուրս է եկել)	Գումարը խանութի կողմից վերադարձվել է դիմումատուին: Տեսչության կողմից ընդունվել է ի գիտություն՝ հետագայում պետական վերահսկողության աշխատանքներում ներառելու նպատակով
3	Արաքսի Ավետիսյան /19.01.10թ. N02/ հսկողությունից հանված է՝ 05.02.10թ.	ք.Երևան, էլեկտրատեխնիկայի տոնավաճառի տարածքում գտնվող խանութից գնված 130000 դրամ արժեքով հեռուստացույցի որակի վերաբերյալ (գտնվելով երաշխիքային ժամկետի մեջ, փչացել է)	Խանութի կողմից հեռուստացույցը փոխարինվել է նորով
4	Հրաչյա Համբարձումյան /21.01.10թ. N03/ հսկողությունից հանված է՝ 03.02.10թ.	ք.Երևան, «Սեմուր ընդ կո» ընկերությանը պատկանող խանութ-սրահից գնված ծալքավոր թիթեղների որակի վերաբերյալ (տեղադրելիս ի հայտ է եկել թիթեղների մի մասի արտադրական խտանը)	Ընկերության կողմից անորակ թիթեղները փոխարինվել են նորերով: Տեսչության կողմից ընդունվել է ի գիտություն՝ հետագայում պետական վերահսկողության աշխատանքներում ներառելու նպատակով

5	<p>Սուսաննա Առաքելյան /26.01.10թ. N04/ հսկողությունից հանված է՝ 09.02.10թ.</p>	<p>ք.Երևան, Ամիրյան,12 հասցեում գտնվող «SAMSUNG» հանութից գնված 172000 դրամ արժեքով սառնարանի որակի վերաբերյալ (աշխատանքի ժամանակ առաջանում է չափից ավելի ուժեղ աղմուկ)</p>	<p>Ընկերության կողմից անորակ սառնարանը փոխարինվել է նորով:</p>
6	<p>Արևիկ Անանյան /05.02.10թ. N05/ հսկողությունից հանված է՝ 15.02.10թ.</p>	<p>ք.Երևան, Տ.Մեծի,17 հասցեում գտնող «Ռեդ Լայն» ՍՊԸ-ից պայմանագրային հիմունքներով ապառիկ կարգով գնված 48000 դրամ արժեքով ձմեռային կոշիկների որակի վերաբերյալ (մի քանի անգամ հագնելուց հետո ի հայտ են եկել մի շարք թերություններ)</p>	<p>Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:</p>
7	<p>Արմեն Բաղդասարյան /16.02.10թ. N06/ հսկողությունից հանված է՝ 17.02.10թ.</p>	<p>ք.Երևան, Մաշտոցի, 20 հասցեում գտնվող «Սոբիլկենտրոն» ֆիրմային խանութից գնված 62500 դրամ արժեքով «SAMSUNG C5212» բջջային հեռախոսի որակի վերաբերյալ(գնելու օրը փչացել է,փոխարինվել է նորով,սակայն երեք օրից այն նույնպես փչացավ)</p>	<p>Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:</p>
8	<p>Ա.Մխիթարյան /16.02.10թ. N07/ հսկողությունից հանված է՝ 19.02.10թ.</p>	<p>ք.Երևան, Աբովյան-Կորյուն գետնանցումում գտնվող «Նորիկ Թոռչյան» ԱԶ տաղավարից գնված 3500 դրամ արժեքով ֆլեշ-կուտակիչի որակի վերաբերյալ(գնելուց երկու օր հետո փչացել է)</p>	<p>Գումարը անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերադարձվել է դիմումատուին:</p>

9	<p>Լիլիթ Խաչատրյան /04.03.10թ. N09/</p> <p>հսկողությունից հանված է՝ 10.03.10թ.</p>	<p>ք.Երևան, Կիևյան,22 հասցեում գտնող «Ռեդ Լայն» ՍՊԸ-ին պատկանող «Լավանդա» խանութ-սրահից գնված 40000 դրամ արժեքով ձմեռային կոշիկների որակի վերաբերյալ (մի քանի անգամ հազնելուց հետո ի հայտ են եկել մի շարք թերություններ)</p>	<p>Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:</p>
10	<p>Սամվել Ալթունյան /10.03.10թ. N11/</p> <p>հսկողությունից հանված է՝ 10.03.10թ.</p>	<p>ք.Երևան, Չարենցի, 115 հասցեում գտնվող խանութից գնված 31000 դրամ արժեքով ավտոմեքենայի մարտկոցի որակի վերաբերյալ(գնելուց չորս ամիս հետո փչացել է)</p>	<p>Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:</p>
11	<p>Լիլիթ Ենոքյան /03.03.10թ. N08/ «Սպառողների Ասոցիացիա» ՀԿ 02.03.10թ N03.03.10</p> <p>հսկողությունից հանված է՝ 15.03.10թ.</p>	<p>ք.Երևան, Ե.Քոչարի,8/6 հասցեին կից գտնվող «ԿԻԿԻ» հագուստի խանութից գնված 6000 դրամ արժեքով կանացի բլուզի և 18000 դրամ արժեքով տաբատի որակի վերաբերյալ (մի անգամ հազնելուց հետո տաբատը սկսել է գունաթափվել)</p>	<p>Խանութի տնօրինությունը առաջարկեց լվանալ տաբատը և գունաթափությունը չդադարելու դեպքում խոստացավ վերադարձնել գումարը:Լվանալուց հետո գունաթափությունը դադարեց և դիմումատուն այլևս պահանջ չի ներկայացնում</p>
12	<p>Անահիտ Խաչատրյան /05.03.10թ. N10/</p> <p>հսկողությունից հանված է՝ 15.03.10թ.</p>	<p>ք.Երևան, Բաղրամյան,79 հասցեում գտնվող «Պունտո Ջառա» խանութից գնված կանացի բլուզի որակի վերաբերյալ (պարզվել է,որ բլուզը իրեն հարմար չէ)</p>	<p>Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:</p>
13	<p>Գայանե Պետրոսյան /19.03.10թ. N12/</p> <p>հսկողությունից հանված է՝ 25.03.10թ.</p>	<p>ք.Երևան, Կիևյան փողոցում գտնվող «Ռոբերտո» խանութից գնված կանացի կիսաձտքավոր կոշիկի որակի վերաբերյալ (ի հայտ է եկել խոտան)</p>	<p>Պարզվեց, որ բացակայում է գնման փաստը հաստատող ՀՂՄ-ի կտրոնը:Այդ պատճառով հնարավոր չեղավ բավարարել դիմումատուի բողոքը:Դիմումատուին առաջարկվել է ցանկության դեպքում հարցին լուծում տալ դատական կարգով: Տեսչության կողմից ընդունվել է ի գիտություն՝ հետագայում պետական վերահսկողության աշխատանքներում ներառելու նպատակով:</p>

14	Անուշ Մելիքսեթյան /19.03.10թ. N13/ հսկողությունից հանված է՝ 29.03.10թ.	ք.Երևան, Թումանյան 10/2 հասցեում գտնող «Ռիչ Կոմպ» ՍՊԸ-ի խանութ-սրահից պայմանագրային հիմունքներով ապառիկ կարգով գնված 156500 դրամ արժեքով համակարգչի որակի վերաբերյալ (շահագործման ընթացքում ի հայտ են եկել մի շարք թերություններ)	Ընկերության կողմից համակարգչի անորակ մասերը փոխարինվել են նորերով:
15	Սիրուշ Ղավոյան /07.04.10թ. N14/ հսկողությունից հանված է՝ 08.04.10թ.	ք.Երևան, Բենյամինյան փ. թիվ 188 դպրոցի հարևանությամբ գտնվող «Բյուրեղ» ՍՊԸ-ի խանութից գնված 4800 դրամ արժեքով էլեկտրական թեյնիկի որակի վերաբերյալ (նույն օրը փչացել է)	Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:
16	Ցողիկ Մանուկյան /15.04.10թ. N16/ հսկողությունից հանված է՝ 20.04.10թ.	ք.Երևան, «Տելեմարկետ» ընկերությունից գնված արդուկի որակի վերաբերյալ (չի կատարում հեռուստագովազդում նշված ֆունկցիաները)	Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:
17	Սուրեն Ավետիսյան /04.05.10թ. N17/ հսկողությունից հանված է՝ 07.05.10թ.	ք.Երևան, «Օսրամ Լայթինգ» ընկերությունից գնված երկու հատ ժամանակի ռելեների որակի վերաբերյալ (գնելուց մի շաբաթ անց պարզվել է, որ չեն կատարում հայտարարագված ֆունկցիաները)	Գումարը ընկերության կողմից վերադարձվել է դիմումատուին:
18	Գրետա Հակոբյան /18.05.10թ. N18/ հսկողությունից հանված է՝ 20.05.10թ.	ք.Երևան, «Վիզոդնայա պոկուպկա» խանութից գնված կանացի կոշիկի որակի վերաբերյալ (ի հայտ է եկել խոտան)	Պարզվեց, որ բացակայում է գնման փաստը հաստատող ՀՂՄ-ի կտրոնը: Այդ պատճառով հնարավոր չէրավ բավարարել դիմումատուի բողոքը: Դիմումատուին առաջարկվել է ցանկության դեպքում հարցին լուծում տալ դատական կարգով:
19	Համլետ Ղարայան /25.05.10թ. N19/ հսկողությունից հանված է՝ 07.06.10թ.	ք.Երևան, «Իդեալ» խանութից գնված լամինատե հատակի (47 ք.մ.) որակի վերաբերյալ (տեղադրելու ժամանակ ի հայտ է եկել խոտան)	Ընկերության կողմից լամինատե հատակը փոխարինվել է նորով

20	Աշոտ Կուլյան /13.04.10թ. N15/ հսկողությունից հանված է՝ 11.06.10թ.	ք.Երևան, Ռաֆֆու 55 հասցեում գտնվող, «Իմէք Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող «Իդեալ» խանութ-սրահից գնված 29000 դրամ արժեքով զուգարանակոնքի որակի վերաբերյալ (տեղադրելուց հետո ի հայտ է եկել թերություն)	Ընկերության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն մյուս նույնատիպ ապրանքաքանակը ստանալու պես համեմատական գործողությունների շնորհիվ պարզել զուգարանակոնքի աշխատունակությունը և անհրաժեշտության դեպքում փոխարինել նորով
21	Անահիտ Ոսկանյան /10.06.10թ. N21/ հսկողությունից հանված է՝ 14.06.10թ.	ք.Երևան, Ֆիրդուսու փողոցում գտնվող տոնավաճառից գնված էլեկտրական թեյնիկի որակի վերաբերյալ (ի հայտ է եկել խոտան)	Գումարը վաճառողի կողմից վերադարձվել է դիմումատուին:
22	Արմենուհի Դովլաթյան /10.06.10թ. N22/ «Սպառողների Ասոցիացիա» ՀԿ 02.05.10թ N01.06.10 հսկողությունից հանված է՝ 14.06.10թ.	ք.Երևան, «Արամազդ» հասարակական կազմակերպությունից գնված 60000 դրամ արժեքով համակարգչի պրոցեսորի որակի վերաբերյալ (նույն օրը փչացել է)	Հ/Կ մասնագետների կողմից պրոցեսորը վերանորոգվեց
23	Հ.Ստեփանյան /04.06.10թ. N20/ հսկողությունից հանված է՝ 15.06.10թ.	ք.Երևան, «Օրանժ Կոմպուտերս» խանութից գնված 220000 դրամ արժեքով ֆոտոլուսարձակի որակի վերաբերյալ (10 ամիս հետո փչացել է)	Պարզվել է, որ ընկերությունը լուծարված է: Դիմումատուին առաջարկվել է դիմել դատական ատյաններ:
24	Սուսաննա Մելիքովա /18.06.10թ. N24/ հսկողությունից հանված է՝ 08.07.10թ.	ք.Երևան, «Իմէք Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող «Իդեալ» խանութ- սրահների ցանցից 2008 թ. գնված օդափոխիչի որակի վերաբերյալ (առկա է ֆրիոն գազի համեմատաբար արագ պակասելը)	Ընկերության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն որ դիմումատուին անվճար կտրամադրվի գազի կորուստը բացահայտող սարք, իսկ ֆրիոն գազի լիցքավորման ծախսերը հոգալու է դիմումատուն, քանի որ ավարտվել է օդափոխիչի երաշխիքայն ժամկետը:
25	Արմեն Երեմյան /14.06.10թ. N23/ հսկողությունից հանված է՝ 21.07.10թ.	ք.Երևան, «Օրանժ – Հայաստան» ՓԲԸ- ից պայմանագրային հիմունքներով չարժական ինտերնետ կապի ծառայության որակի վերաբերյալ	Ընկերության մասնագետների հետ համատեղ իրականացվեց ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվեց, որ ինտերնետ կապը համապատասխանում է պայմանագրային չափանիշներին: Է: Դիմումատուին առաջարկվել է դիմել դատական ատյաններ:

